

## Հայտարարություն

Տեղեկացնում ենք, որ մեղր արտադրող հայկական ընկերությունները, որոնք ցանկանում են իրենց արտադրանքն արտահանել ՉԺՀ, պետք է գրանցվեն ՉԺՀ հավաստագրման և ակրեդիտացիայի վարչակազմում /Certification and Accreditation Administration of PRC, CNCA, [http://english.cnca.gov.cn/about/201512/t20151223\\_42380.shtml](http://english.cnca.gov.cn/about/201512/t20151223_42380.shtml): Այդ գրանցման գործընթացն արդեն իսկ կարելի է սկսել, քանի որ 2017թ. դեկտեմբերին նախաստորագրվել է «ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ, ԿԱՐԱՆՏԻՆԻ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ, ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՉԻՆԱՍՏԱՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ՄԵՂՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» փաստաթուղթը: Մեղր արտադրող հայկական ընկերություններն իրենց մոտ գրանցման համար պետք է ունենան ուղեկցող երաշխավորական նամակ ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ի կողմից, որի հետ պետք է լինեն 2 ձևաթղթերում նշված հարցերի պատասխանները:

1. ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ի կողմից լրացվելիք ձևաթուղթ,
2. ՀՀ մեղր արտադրող ընկերությունների կողմից լրացվելիք գրանցման ձևաթուղթ:

**ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**